

Բերված փաստերն ապացուցում են, որ նազարականության փիլիսոփայությունը իր յուրատեսակ դրսևորումն է գտել «Սասնա ծռեր» էպոսում՝ պարփակված Վերգոյի կերպարի մեջ: Իսկ Դժիկոնը, սերվելով այդ ակունքից, երգիծաբանությամբ մի հետաքրքրական գրույց է, հեքիաթ՝ ունենալով իր սյուժեն, կերպարները եւ հերոսները:

Խնդիրն այն է, որ թե Հովհ. Թումանյանի, թե Դ. Դեմիրճյանի եւ թե Մ. Սարգսյանի (հեքիաթ, կատակերգություն, վեպ) ստեղծագործություններում գործում է հեքիաթի հերոս Բաջ Նազարը, որի նախատիպն ընդունված է ճանաչել Դժիկոնին, չնայած նույն անունը կրող բանահյուսական գրեթե հում-հյուրը Մեծն Թումանյանի գրչի տակ ստացել է նոր ձեւ ու բովանդակություն: Հեքիաթայինը տիրաբար իր թերերն է տարածել նկարագրական բոլոր մանրամասների վրա եւ սնուցում է սյուժետային գծի ծավալումները, իր ամբողջ հասակով մեկ վեր է ծառանում երկիրը կառավարելու նազարական փիլիսոփայությունը, ծառանում է եւ միայն ինքն իր դեմ՝ Նազարը Նազարի դեմ, որ իր գոյությունն արդարացնելու համար, այսպես թե այնպես, փորձում է գտնել իրեն ժողովրդի գլխից վեր պահելու հենասյուներ, մի եղկելի տափակաբանությամբ որոճում աշխարհի ու մարդկանց, բախտի ու ճակատագրի, պատահականի ու պատահականության, անհասանկին հասանկին դարձնելու հավանական ու անհավանական դատարկաբանությունները, վերջին հաշվով նաեւ աշխարհը իր բոլի մեջ պահելու ցնորամիտ նկրտումները:

2) Այսպես ուրեմն՝ Բաջ Նազարը հեքիաթի երեւակայական հերոս չէ միայն, այլ բնական՝ իր խեղճուկրակ կեցվածքով, կենցաղով ու սովորություններով, իրեն ծնող հանրությամբ, պարծենկոտությամբ ու սնապարծայամբ ինքնակա մի յուրահատուկ ծայրահեղականություն, որ ամեն վայրկյան կարող է փուլզվել, կործանվել, անհետանալ իրականի եւ երեւակայականի տեսական հակասությունների պատճառով:

Նազարի նախատիպը համարելով էպոսի Վերգոն՝ ճիշտ է այնքանով, որ հայ ժողովրդական բանավեստում թեւեւ կան նազարատիպ այլեւայլ հերոսներ, սակայն ոչ մեկն էլ այնքան անհատականացված չէ, որքան Վերգոն՝ իբրեւ վախկոտության, մեծգության եւ ստորության մարմնացում: Մնացած բացնսական գծերը լրացնում է նրա ղեկավարող ժառանգը՝ Աստղիկ Յուլաճինը:

Բերված փաստերը ցույց են տալիս, որ ժողովրդական վեպի Վերգոյի եւ հեքիաթի Նազարի բնավորության գծերի, արարքների ու գործելակերպի միջեւ կան զգալի ընդհանրություններ, մանավանդ թագավոր դառնալու անհագ տենչանքի, դրան հասնելու եւ երկիր կառավարելու, աշխարհի վրա արքայական գահից չարախնդալու նկրտումներում:

3) Հովհ. Թումանյանը բանահյուսական նյութը սոսկ գրական մշակման չի ենթարկել, այլ ինչպես ճիշտ է բնորոշել գրականագետ Հրանտ Թամրազյանը՝ «Ժողովրդական խորհուրդներին հաղորդում է հավերժական հնչողություն, նորագույն դարում բացահայտում բոլոր ժամանակներին հարազատ մարդասիրական խնդիրը, - այսինքն՝ հնագույն պատումների ոսկե հատիկը», որ նշանակում է, թե մեծ գրողն իր հանճարի պայծառ լույսով ստեղծել է արդեն հեղինակային անմահ կոթողներ՝ ավանդություններ, հեքիաթներ, առակներ, պատմվածքներ, պոեմներ: «Աստված Թումանյանին տվել է ներքին անսողություն՝ անշուր, անմշան, փոքրիկ նյութի մեջ տեսնել ոսկի հատիկը, թաքուն խորհուրդը: Եվ նա բացել է այդ խոր հանքը ու փայլ տվել, հարստացրել ու բյուրեղացրել»՝ եզրակացնում է բազմախորհուրդ գրականագետը:

Մեծն Թումանյանը, այնուամենայնիվ, զեղարվեստական անկրկնելի կոթողներ ստեղծելով հանդերձ դարձյալ ու դարձյալ զեղարվեստական բարձր չափանիշների հաշվառումով է խոսում իր այս կամ այն երկի մասին:

Հարկ է նշել, որ Թումանյանի «Բաջ Նազարի» անգուղակալության եւ բացառիկ լինելու գրավականը արդյունք է ոչ թե բանահյուսական նյութերի համակցման, այլ գրողը կիրառել է լեզվական բազմաձայնումը, որ արվում է ներսից՝ խոսքի միջուկի նուրբ զարդաբանումով, փոխկապակցված եւ ինքնուրույն կիրառություն ունեցող կերպասություններով, որն ավելի տարողունակ է եւ ընդգրկում՝ իր մեջ խտացնելով տարաբժեղ դարձվածքներ, թեւավոր խոսքեր, բայական վերլուծական կառույցներ, երկխոսություններ եւ խոսքի սարիմաստ միավորներ:

Մյուսը ծավալման մեջ լրացնում են մեկը մյուսին եւ հանդես են գալիս իբրեւ համարժեք միավորներ՝ ունենալով խոհախրատական, դատողաբանական, հեզմական, հաստատական, ժխտական, զգացական, հրամայական, կոչական եւ այլ երանգներ, որով էլ լցվում-հարստացվում-գորացվում է կերպասությամբ:

Ոճապատկերայինի համակարգում խոսքի կենսատու երակները, մտաբոլիքը հայերենի տարբեր մակարդակներից եւ տարածական տարբերակներից վերցված դարձվածային միավորներն են ընդհանրապես, այլեւ հեղինակային նորակերտումները, որով եւ Թումանյանը ներկայանում է որպես ժողովրդական բառ ու բանի մեծ գիտակ, հեքիաթի, գրույցի, առակի գրական մշակման անկրկնելի մեծություն:

С.М.СААКЯН. - Творческие вариации, литературные разработки, речевое искусство армянского народного романа “Верго” и сказки “Храбрый Назар”. Руководствуясь формулировками в произведении Чаренца “Проблема языка подчиняется жанру”, в настоящей статье исследовались фольклорные связи сказки “Храбрый Назар”, связанные с известным образом народного эпоса “Сасна Црер” Верго, одновременно приведены литературные разработки этой сказки, обстоятельно охарактеризован “Храбрый Назар” Ованеса Туманяна.

Исключительность этой работы Ованеса Туманяна обусловлена специфической языковой полифонией в разработке материала, что применялось Комитасом в разработках армянских народных песен.

ՂԵՎՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻ ԲԱՌԱՅԻՆ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԱԾԱՆՑՄԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ)

ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հետազատական հայերենի զարգացումն ընթանում է լեզվի կառուցվածքային տարրերի քանակական-որակական փոփոխությունների ուղիով եւ հասարակական-քաղաքական կյանքի՝ լեզվի վրա ունեցած դերի հարաճուն ազդեցությամբ:

5-8-րդ դարերում լեզվի տարածամասնակյա փոփոխությունների պատկերն ըստ ամենայնի վեր է հանել Ա.Այաթնյանը՝ նկատելով, որ դրանք «մեծ մասամբ նախընթացային համեմատութեամբը նորելուկ բաներ են եւ հետետրոյին նկատմամբ հնուքիւնք են կամ հիմունք»¹:

Ա.Այաթնյանը լեզվական տվյալ գոյավիճակում (8-րդ դար) «նորելուկ բաներ» է համարում նաեւ նոր բաների առաջացումը (էջ 124):

Լեզվում նոր բաների առաջացումը կապվում է բառային փոխառությունների եւ հեղինակային նորակազմությունների հետ:

8-րդ դարի հայերենի բառային կազմի հարստացման գործում իր նպաստն է բերել նաեւ Ղեւոնդ Վարդապետ պատմիչը, որ սերունդներին է ավանդել «Պատմութիւն» (կամ «Ժամանակագրութիւն») երկը:²

Ղեւոնդի մատյանում հանդիպում են բառային նորակազմություններ, առաջին անգամ գործածված դարձվածային միավորներ, փոխառություններ, բարբառային բառեր եւ գրաբարյան շերտի բառեր՝ նոր նշանակություններով³:

Ուսումնասիրելով Ղեւոնդի երկի հեղինակային նորակազմությունները՝ նկատում ենք, որ նա կիրառել է լեզվի բառակերպման միջոցները՝ բարդությունն ու ածանցումը:

Լեզվաբանական գրականության մեջ բարդ եւ ածանցավոր բառերն անվանում են բաղադրյալ բառեր, որոնց կաղապարների մեջ տարբերակում են միջուկային եւ առմիջուկային անդամները. ընդ որում բաղադրյալ տեսակները որոշվում են բաղադրիչների բնույթով⁴:

Բաղադրյալ կառուցվածքում միջուկի դերով հանդես է գալիս արմատը, որ ձեւավորում է բառակազմական հիմք, իսկ որպես առմիջուկային բաղադրիչ՝ համատիպ որեւէ միավոր կամ էլ կախյալ որեւէ ձեւույթ: Երկրորդ բաղադրիչը կոչվում է ածանց, ածանցավոր բառի սերումը՝ ածանցում: Համատիպ բաղադրիչներով բաղադրությունը կոչվում է բարդություն, իսկ դրա սերումը՝ բարդում⁵:

Ածանցումն ու բարդ լուրը (բառաբարդումը) դիտվում են իբրեւ բառակազմության գլխավոր եղանակներ:

Հին հայերենի բառակազմական կաղապարները ներկայացվում են այդ երկու հիմնական խմբերով: Յուրաքանչյուր խմբում առանձնացվում են հիմնականապարներ եւ դրանց մասնակաղապարները:

Հիմնականապարը բնութագրվում է բաղադրիչների քանակով ու կազմով, մասնակաղապարը՝ ըստ հիմնականապարի կազմիչ միավորների կրած փոփոխությունների, ինչպես նաեւ սկզբնահիմքերի խոսքիմասային արժեքի⁶:

Ներկա հոդվածի շրջանակներում մենք կփորձենք քննել Ղեւոնդի երկի այն նորակազմությունները, որոնք ստեղծվել են ածանցման կաղապարներով⁷:

Բաղադրյալ իմաստակառուցվածքային սլոանում կարելի է առանձնացնել լեզվական հակադրվող երկու միավոր՝ անկախ առկա ձեւույթների քանակից⁸: Այդպիսի անդամատումը սկսելով ոչ թե բաղադրյալ, այլ բա-

¹ Ա.Այաթնյան, Բնական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, ԵՊՀ հրատ., Ե., 1987, էջ 124:

² Տե՛ս Ղեւոնդի Վարդապետի Պատմութիւն, Ա.Պետրոսով, 1887:

³ Ղեւոնդ Վարդապետի երկի դարձվածային միավորների բնությունը տե՛ս Լ.Լ.Խաչատրյան, Գրաբարի դարձվածային միավորների ձեւաբանական-կառուցվածքային ախտերն ըստ Ղեւոնդ Վարդապետի «Պատմութիւն» երկի («Լրաբեր» հաս. գիտությունների, Ե., 1998, N1):

⁴ Գ.Ջահուկյան, Ժամանակակից հայերենի բառակազմություն եւ իմաստաբանություն, Ե., 1989, էջ 158:

⁵ Անդ:

⁶ Լ.Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987, էջ 57:

⁷ Ղեւոնդի նորակազմությունների բառաբարդման կաղապարների բնությունը մենք կամողորմաբանաբար ստանձին հոդվածով:

⁸ Բառային մակարդակում առկա ձեւի անդամատում կատարելու եւ բառակազմական հմարավոր կաղապարներ ստանալու նպատակով բաղադրյալ կառուցվածքային տարրերը կարելի է նշանակել հետեւյալ պայմանական տառերով s-սկզբնահիմք, a-առանց, f-քերականական մասնիկ, j-հաղակապ, p-նախադր (տե՛ս Լ.Հովսեփյան, Նշվ., աշխ., էջ 56): (Ղեւոնդի նորակազմությունների կառուցվածքը քննելիս մենք կիրառելու ենք Լ.Հովսեփյանի առաջարկած բառակազմական կաղապարները):

դադրելի միավորներից՝ կարելի է ցույց տալ վերջիններիս բաղադրման ընթացքը՝ բառաբերականական ձևային փոփոխությունների բառակազմական քայլերի հաջորդականությունը՝

Բառակազմական քայլերի հաջորդականության բացահայտումն անհրաժեշտ է հատկապես այն բաղադրությունների դեպքում, որոնք ունեն եռաձևային, բառաձևային կամ բազմաձևային կառուցվածքային տիպեր:

Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է պարզել, թե բազմաձևային բառերը կերտելիս Ղևոնդյան ինչպիսի՝ բառակազմական հիմքեր է համադրել, ինչ հաջորդականությամբ կամ թե բառակազմական ինչ եղանակներ է գործադրել՝ բառաբարդումը, թե՞ ածանցումը:

Այսպես, վերլուծենք *սակալիմացութիւն*, *բախանցական* եւ *անձնիշխանաբար* նորակազմությունների կաղապարները եւ փորձենք գտնել դրանց կազմիչների բաղադրման քայլերի հաջորդականությունը¹⁰:

Սակալիմացութիւն բաղադրությունը կարելի է անդամատել երեք հնարավոր ձևավորումների՝ սակալ (S), իմաց (S') եւ ութին (a). Որա բառակազմական կաղապարը կունենա SS'a բանաձևը:

Ինչպես նկատում ենք, այս բառի արտահայտության պլանում առկա է ութին (a) ածանցը. ուրեմն կարելի է, արդյոք, այս բառի կերտման եղանակ դիտել ածանցումը:

Հարցի պատասխանը գտնելու համար փորձենք բաղադրությունը անդամատել հետևյալ հնարավոր տիպերով.

ա) սակալիմաց - ութին (SS'a)

բ) սակալ - իմացութիւն S(S'a):

Ըստ ՆՀԸ եւ ԱԲ աշխատությունների տվյալների, գրաբարում չկա *սակալիմաց* բաղադրությունը. հետևաբար *սակալիմացութիւն* բաղադրության համար *սակալիմաց* բաղադրիչը չէր կարող սերտվել հիմքի դեր կատարել:

Նույն բառաբանների տվյալներով գրաբարում կենսունակ գործածություն ունի *իմացութիւն* ածանցավոր կազմությունը (S'a), որը բնականաբար եռաձևային բաղադրության համար կարող էր դառնալ ածանցավոր հիմք:

Ուրեմն Ղևոնդյան այս բաղադրությունը կերտել է լեզվում անկախաբար գոյակցող *սակալ* արմատից¹¹ եւ *իմացութիւն* ածանցավոր բառից: Հետևաբար կարելի է այդ բառի ստեղծման եղանակ դիտել բաղադրությունը S(S'a) կաղապարով:

Թափանցական բառը նույնպես ածանցավոր կազմություն ունի: Այս բաղադրության իմաստակառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս, որ այն կերտվել է սերտական բառի հիմքի եւ երկրորդական ձևային միջոցով:

Վերլուծենք նրա կառուցվածքային հնարավոր տիպերը.

ա) թափ - անցական - S(Sa),

բ) թափանց - ակն - (SS)a:

Բաղադրության առաջին անդամատումը՝ S(Sa), բնություն չի բռնում. նախ՝ գրաբարում *թափ* արմատը անկախ գործածություն չունի. այն հիմնականում հանդիպում է վերլուծական (թափ անցանել, ընդ թափ անցանել, թափ անկանել, թափ մտանել) եւ համադրական կազմություններում (թափանցիկ, թափանցեալ, զառիթափ, անթափանց, անթափանցելի, թափառանք, թափառական), երկրորդ՝ գրաբարում *անցական* կազմություն վկայված չէ:

Կենսականի՝ բառակազմական քայլերի հաջորդականությանը համապատասխանում է սերման երկրորդ եղանակը՝ ածանցումը, որտեղ բառը հիմքը եւ երկրորդական ձևային իմաստաբանորեն ընկալվում են իրրեւ անմիջական կազմիչներ (SS)a կաղապարով:

Սակայն բառակազմության դիմամիկ/եղանակի (սկզբունքների) գործադրումը միշտ հնարավորություն չի ընձեռում բացահայտելու նորակազմության առաջացման ուղին: Այդ ուղիների բացահայտումն էլ կապված է բառակազմական քայլերի հաջորդականության որոշման հետ. վերջինս որոշ նորաստեղծ բաղադրությունների դեպքում դժվարություն է ներկայացնում՝ պայմանավորված բաղադրության սերտվելիքի անկախ գործածության հանգամանքով:

Այսպես, *անձնիշխանաբար* բաղադրության բառակազմական կաղապարը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով՝ SSaa: Սակայն հարց է ծագում. որո՞նք են այդ բաղադրության սերտվելիքի հիմքերը կամ հիմնային կազմիչները:

Ըստ բառակազմության դիմամիկ եղանակի, աստիճանաբար քայլերով հետ դառնալով ավարտված բաղադրության կառուցվածքից՝ հնարավոր է տարբերակել հետևյալ սերտվելիքի հիմքերը՝

ա) անձն - իշխանաբար - S(Saa),

բ) անձնիշխան - արար - (SSa)a:

⁹ Գ. Ջահուկյանը բառակազմական քայլերի հաջորդականության բացահայտումը կապում է բառակազմության դիմամիկ ընթացման սկզբունքի հետ, որի դեպքում «առաջնային բնության առարկա են բաղադրյալ ածանցյալ աւ բաղադրյալ բառերը, որպես առկա կազմություններ» (Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 162):

¹⁰ Բաղադրության բառը կամ ածանցավոր հիմքերը առնվում են փակագծերի մեջ:

¹¹ Սակալ բառի աւ մասնիկը մթազնել է, եւ այն ընկալվում է իրրեւ արմատական բառ (տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Է., 1979, հ. 4, էջ 160):

Սկզբից եւեթ ասենք, որ երկու հիմքերն էլ հնարավոր են: Առաջինի դեպքում գործ ունենք բաղադրության երկրորդում՝ ածանցման հետ:

Գրաբարում անկախ բառական արժեք ունեն թե՛ *իշխանաբար*, թե՛ *անձնիշխան* բառերը. ուստի երկուսն էլ հավասարապես կարող են հանդես գալ իրրեւ բառակազմական հիմքեր:

Այդ դեպքում բառակազմական ո՞ր միջոցն է կիրառել Ղևոնդյանը:

Սեր կարծիքով այսօրինակ բաղադրությունների սերտվելիքի հիմքերը կարելի է ճիշտ որոշել եւ խոսափել թեա-կան պատասխաններից, եթե բացահայտվեն բառակազմական բաղադրիչների իմաստագործառական արժեք-ները. այսինքն՝ որոշվի՞ դրանք ուղղակի՞, թե՞ ածանցյալ իմաստներով «են մտել» բաղադրյալ մեջ:

Այս առումով իմաստային հետաքրքրական կիրառություն ունի *անձն* բաղադրիչը. գրաբարում այն հա-ճախ գործածվում է անձնական դերանվան իմաստով¹²:

Հմտ. Եւ խորհեք հնարս գտանել, որով մարթասցեն զանձինս ապրեցուցանել (Ղեւ., 23): (Եվ հնարներ էր որոնում, որպեսզի (որոնց միջոցով) իրենք կարողանան փրկվել): Արդ գտնե անձին իմում ներեցէք չսպանանել (27): (Արդ գտնե ինձ մի սպանեք, ներեցեք):

Ըստ այդմ էլ *անձնիշխան* նշանակել է ոչ միայն «իր կամքին տեր. ազատ. ինքնագլուխ, հանդուգն», այլեւ «ինքնիշխան»: Ղևոնդյան այս հիմքին է բաղադրել մակբայակերտ ածանցը՝ նկատի ունենալով գործողության կատարման կերպը՝ «իրեն իշխան զգացողի պես, ինքն իրեն իշխանավայել պահելով»:

Հմտ. Եւ զամենայն արեւման անձնիշխանաբար փոխել ջանայք (44): Անձնիշխանաբար զթալատութիւն մեզ ի մկրտութիւն փոխել (82):

Բաղադրության կազմիչների իմաստաարժեքային այսօրինակ բնությունից կարելի է եզրակացնել, որ *անձնիշխանաբար* բաղադրությունը կերտվել է ածանցման (SSa)a կաղապարով:

Այժմ փորձենք Ղևոնդյան նորակազմությունները դասակարգել ըստ ածանցման կաղապարների՝ տարբե-րակելով նախաածանցավոր եւ վերջածանցավոր տեսակներ:

Ածանցումը հայերենի բառակազմության գործուն միջոցներից է: Ածանցները, որպես բառակազմական ձևային, «կարող են հանդես գալ երկու դերով՝ զոյաբանական-իմաստաբանական եւ լեզվական: Առաջին դեպքում նրանք հիմքային իմաստին ավելացնում են նոր իմաստ կամ փոխում նրա սկզբնական իմաստային արժեքը, երկրորդ դեպքում նրանք որոշում են լեզվական կաղապարների մեջ միավորների գրավելիք տեղերը, դրանց համապատասխան փոփոխությունները»¹³:

Ղևոնդյան հեղինակած նորակազմությունների մեջ ածանցման կաղապարները զգալի տեսակարար կշիռ ունեն: Նա ածանցավոր բառեր է կերտել թե՛ պարզ, թե՛ բաղադրյալ հիմքերից՝ նախապատվությունը տալով վեր-ջածանցման եղանակին:

1. Նախածանցում¹⁴: Նախածանցավոր կազմությունները ներկայացնում են aS հիմնականապարը, երբ նախածանցը բաղադրվում է մաքուր հիմքից: Այն ունի իր մասնակաղապարները:

Ղևոնդյան հեղինակած նախածանցավոր կազմությունների մեջ նախածանցի դերով հանդիպում են ան-, բաց-, առ- երկրորդական բառակազմական ձևայինները:

aS հիմնականապարով հանդիպում է անգիշեր (60)¹⁵ կազմությունը:

Հեղինակային որոշ նորակազմություններ ստեղծվել են aS հիմնականապարի մասնակաղապարներով:

1. a(Sa) - այս դեպքում նախածանցը դրվում է վերջածանցով ձևավորված հիմքի վրա, ինչպես՝ բացահո-սումն (87), անհամեն (64):

2. a(S'a) - նախածանցը դրվում է երկրորդային սերտվելիքի վրա, որ քերականորեն ձևավորված հիմք է եւ ունի վերջածանց, ինչպես՝ անբառնալի (167):

3. a{(Sa)a} - նախածանցը դրվում է երկրորդային սերտվելիքի վրա, որ ունի երկու վերջածանց, ինչպես՝ անխոհականապես (85), առանսեսայք (87):

4. a{(a)Sa} - նախածանցը դրվում է երկրորդային սերտվելիքի վրա, որ ունի թե՛ նախածանց եւ թե՛ վերջա-ծանց. հանդիպում է անտարագրելի (97) կազմությունը:

5. a(SjS) - նախածանցը դրվում է երկրորդային սերտվելիքի վրա, որ կազմությամբ հոդակապով բաղադր-յուն է, ինչպես՝ անողջախոհ (92):

Այսպիսով, Ղևոնդյան հեղինակած նախածանցավոր կազմությունները մի կողմից համալրում են գրաբարի բառային կազմը, մյուս կողմից՝ ցույց են տալիս գրաբարի նախածանցման կաղապարների բազմազանությունն ու բաղադրյալ երկրորդական հիմքերի ածանցելիական հնարավորությունները:

¹² Տե՛ս Ա. Արքայանյան, Գրաբարի ձևաբանություն, Ե., 1964, էջ 80:

¹³ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 173-164:

¹⁴ Գրաբարի քերականները նախածանցավոր կազմություններն աւանդաբար դիտել են իրրեւ անվան «ձեւ», իսկ վերջածան-ցավոր կազմությունները՝ իրրեւ «տեսակ» (տե՛ս Բ. Դպիր, Պարզաբանություն քերականության կարգադրում եւ դիրքի մաս, Պո-լիս, 1736, էջ 213-227: Մ. Չամչյան, Քերականություն հայկական լեզուի, Վենետիկ, 1779, էջ 193): Գ. Ավետիսյանը փորձում է տարբերակել ածանցումն ու բաղադրյալները եւ մեկ ընդհանուր տեսակի մեջ է միավորում նախածանցավոր ու վերջածանց-ավոր կազմությունները՝ դարձյալ դուրս չգալով ավանդական ըմբռնման «ձեւի» եւ «տեսակի» շրջանակներից (Գ. Ավետիսյան, Քերականություն հայկական, Վենետիկ, 1815, էջ 206-209):

¹⁵ Փակագծում տրվում է Ղևոնդյան երկուսն ալիքով նորակազմության էջը:

Նախաձեռնողը կազմություններում գործառնապես առանձնացնում է ան- ժխտական նախաձեռնողը, որ հանդես է գալիս քննարկված aS հիմնականապես հնարավոր մասնակաղապարներում, իսկ նախադրյուններից առաջացած առ- նախաձեռնողը է հունարան դարձրել կերտած բաց- ածանցակերպը հեղինակային նորակազմությունների մեջ սահմանափակ գործածություն ունեն:

2. Վերջաձեռնում: Վերջաձեռնումը նույնպես բառակազմական գործընթացի կենսունակ միջոցներից է. այն նախաձեռնումն համեմատությամբ ունի հակառակ ուղղվածություն: Եթե նախաձեռնումն դեպքում սերող հիմքն աճում է ձախընթաց ուղիով, ապա վերջաձեռնումն պարագային այն ունի աջընթաց ուղղվածություն:

Ղեկնողի նորակազմությունների մեջ զգալի թիվ են կազմում վերջաձեռնումն կաղապարով առաջացած բաղադրությունները:

Վերջաձեռնումն հիմնականապես ներկայացնում է Sa բանաձևը. այդպիսի բաղադրությունը միարմատ (միանիմք) է մեկ վերջաձեռնողով կազմություն է. այն ունի իր մասնակաղապարները՝ պայմանավորված սերող առաջնային հիմքի տեսակով (սպարգ, ածանցավոր, քերականորեն ձևավորված, հնչյունավորված կամ բաղադրյալ):

Sa հիմնականապես հանդիպում են հետևյալ նորակազմությունները՝ յամբել (145), փարաունեան (110):

Որոշ նորակազմություններ ներկայացնում են այս հիմնականապես մասնակաղապարները, ինչպես՝
1. Sja - սերող հիմքը է ածանցել միացել են հողակապով, ինչպես՝ արարաբար (92), իժարար (131), առասպելագոյն (77):

2. Sa - սերող հիմքը հանդես է գալիս հնչյունավորված ձևով, ինչպես՝ գրկութիւն (67), գրկումն (98):

3. Sa - իրեն սերող հիմք հանդես են գալիս բայական հիմքերը, ինչպես՝ աղարտելի (60), խոցումն (18), զգեցութիւն (94), զգայագոյն (77), անվանական հիմքերը՝ իրենացական (35):

4. (aS)a - սերող հիմքը նախաձեռնողով կազմություն է, ինչպես՝ անդորրիչ (33), անճաշութիւն (107)¹⁶:

5. (paS)a - սերող հիմքը երկաձեռնողով կազմություն է՝ յանդարձի (29):

6. (aS)a - սերող հիմքը նախաձեռնողով կազմություն է է ունի քերականական ձևավորում, ինչպես՝ ակամայութիւն (122):

7. (Sa)a - սրանք երկվերջաձեռնողով բաղադրություններ են, որոնց առաջնային սերող հիմքը ածանցավոր կազմություն է: Այդ նորակազմությունների վերջին ածանցը ցույց է տալիս բառակազմական վերջին քայլը, ինչպես՝ ազդողական (153), արուեստաորիչ (66), զրաւորութիւն (71):

Այս կարգի բաղադրությունների վերջաձեռնողները ելույթն են միացած են լինում հողակապով, ինչպես՝ բաւականապէս (163), նենգաւորագոյն (93):

8. {(Sa)a}a - սրանք երկաձեռնողով բաղադրություններ են, որոնց սերող առաջնային հիմքը երկվերջաձեռնողով կազմություն է, ինչպես՝ արդիւնաւորութիւն (121), գերեստանայք (132), մարդկայինս (66), փառաւորագոյնս (88):

Հանդիպում են վերջաձեռնումն մասնակաղապարներով նորակազմություններ, որոնց առաջնային սերող հիմքը բարդ բառ է, ինչպես՝

9. (SS)a - սերող հիմքն անհողակապ բաղադրություն է, ինչպես՝ երկրպագու (67), քափանցական (153):

10. (SjS)a - սերող հիմքը հողակապով բաղադրություն է, ինչպես՝ ժամտաբարոյ (166), ինքնաբաւական (66):

11. (SjS)a - սերող հիմքի երկրորդ բաղադրիչը քերականորեն ձևավորված է, ինչպես՝ գերեվարութիւն (168), դժուարահաւատայի (69), հարկապահանջութիւն (18), մամնագրութիւն (90), չարագործաւ (53), սրաւեսաւ (73), փոկահարութիւն (137):

12. (Sda)a - սերող հիմքն ածանցավոր բաղադրություն է. վերջաձեռնողը հիմքին միացել է հողակապով, ինչպես՝ անճնիշխանաբար (44):

Ղեկնողի երկում հանդիպող վերջաձեռնողով կազմություններն իրենց կառուցվածքային սարքերակներով (մասնակաղապարներով) գերազանցում են նախաձեռնողով ձևերին: Բառակազմորեն կենսունակ են -ական, -գոյն, -ութիւն, -պէս, -իչ, -աւղ երկրորդական ձևայինները:

Այսպիսով, բառակազմական ինչ օրինաչափություններ են ի հայտ բերում Ղեկնողի երկում հանդիպող ածանցավոր նորակազմությունները.

¹⁶ «Նախաձեռնողվերջաձեռնողով» կազմությունների առաջացման հարցը հայագիտության մեջ ստարակարծությունների տեղիք է սպի: Որոշ հետազոտողներ ընդունում են բառակազմության մի նոր տեսակ, որի մեջ ընդգրկվող բառերը ստացվում են այսպես կապված «բարդման ու ածանցման համակցությամբ» (Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 109), կամ բառակազմության տեսանկյունից բնութագրելով՝ «բաղադրիչների միաձաձեռնակա կցումով՝ բառակազմական մեկ քայլի ընթացքում» (Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 187-188):

Մ. Գալստյանը այդ կարգի բառերի կազմավորման մասին այլ տեսակետ ունի. «Միաձաձեռնակա բաղադրում, երբ հիմքն ստանա է՝ նախաձեռնող, երբ վերջաձեռնող, հնարավոր է» (Մ. Գալստյան, Ածանցները եւ ածանցումը ժամանակակից հայերենում, Ե., 1978, էջ 77):

Չարգացնելով այդ տեսակետը՝ Մ. Գալստյանը վերջերս հրատարակած մի հոդվածում հերքում է «նախաձեռնողվերջաձեռնողովման, որպես առանձին ինքնուրույն եղանակի առկայությունը հայերենում» եւ եղած կազմությունները դիտում է որպես «կաղապարային համարանություններ» (Մ. Գալստյան, «Քառույթ» («նախաձեռնողվերջաձեռնողով» եւ «բարդաձեռնող») բաղադրությունները հայերենում, «Բանբեր» ԵՊՀ, 1997, № 3, էջ 72-76):

1) Եթե բարդության կաղապարների իմաստակառուցվածքային պլանում կարելի է ցույց տալ իմաստակիր (երկու) միջուկներ, ապա ածանցման կաղապարներում առկա է միջուկի եւ առմիջուկային անդամ(ներ)ի (երկրորդական ձևայինների) հարաբերակցություն:

2) Ածանցման կաղապարները երկուսն են՝ նախաձեռնում եւ վերջաձեռնում:

3) Վերջաձեռնողով նորակազմությունները ներկայացնում են Sa կաղապարը, նախաձեռնողները՝ aS:

4) Ածանցման կաղապարները, պայմանավորված հիմնային բաղադրիչների կառուցվածքային տեսակներով, ունեն իրենց բառակազմական մասնակաղապարները:

5) Ղեկնողի երկի ածանցավոր նորակազմություններն ստեղծվել են գրաբարի բառակազմական սկզբունքներով ու համաբանության օրենքով:

ХАЧАТРЯН Л. Л. — Лексические новообразования в “Истории” Гевонда Вардапета /Модели деривации/. Лексические новообразования Гевонда Вардапета могут дать определенное представление о семантической структуре словарного состава армянского языка VIII века.

В «Истории» Гевонда Вардапета употребляется ряд лексических новообразований, созданных по моделям словосложения и деривации.

В статье рассматриваются модели деривации, на основе которых образовались префиксальные /aS/ и суффиксальные слова /Sa/. Основные модели деривации имеют свои микромодели, которые различаются по структурным типам основообразующего компонента.

Производные слова в «Истории» Гевонда Вардапета образовались по правилам словообразования древнеармянского языка, по закону аналогии.